



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՇՈՂ ռեկտոր Ե.Ս. Մերոբյան

12

2023թ.

**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՐԾԻՔ**

Մերի Վիկտորի Արզումանյանի «Հայաստանի ցամաքային փափկամարմինների բազմազանությունը և էկոլոգիան» թեմայով ատենախոսություն վերաբերյալ, որը ներկայացված է Գ.00.08՝ «Կենդանաբանություն. Մակարուծաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Թեմայի արդիականությունը

Փափկամարմինները, որպես անողնաշար կենդանիների հիմնական կարգաբանական խումբ, կազմում են սննդային շղթայի կարևորագույն մաս: Հայաստանում փափկամարմինների բազմազանության և էկոլոգիայի հարցերի ուսումնասիրությունը բավականին արդիական է, քանի որ վերջիններս ծառայում են որպես շրջակա միջավայրի փոփոխվող պայմանների ազդեցության գնահատման կենսացուցիչներ, իսկ ժամանակակից գենետիկական մեթոդները հնարավորություն են տալիս նոր տեսակների հայտնաբերման: Լինելով շատ զգայուն շրջակա միջավայրի փոփոխվող պայմանների նկատմամբ՝ փափկամարմինները կիրառվում են, մասնավորապես, ծանր մետաղների և թունաքիմիկատների ազդեցությունը գնահատելու համար:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է եղել գնահատել Հայաստանի ցամաքային փափկամարմինների արդի վիճակը՝ ուսումնասիրել բազմազանությունը և վեր հանել այն տեսակները, որոնք կարող են որոշ արիտիկ և մարդածին գործոնների ազդեցության կենսացուցիչ հանդիսանալ:

Նշված նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Իրականացնել Հայաստանի ցամաքային փափկամարմինների ֆաունայի արդի վիճակի գնահատում՝ տեսակային կազմի և տարածվածության վերլուծություն:

2. Ուսումնասիրել Հայաստանի որոշ ցամաքային փափկամարմինների ներտեսակային՝ գենետիկական բազմազանությունը:
3. Ուսումնասիրել ցամաքային փափկամարմինների օգտագործման հնարավորությունը որպես Հայաստանում էկոհամակարգերի վրա զբոսաշրջության ազդեցության գնահատման կենսացուցիչ:
4. Ուսումնասիրել ցամաքային փափկամարմինների օգտագործման հնարավորությունը որպես Հայաստանում էկոհամակարգերի վրա ծանր մետաղների ազդեցության գնահատման կենսացուցիչ՝ Հայաստանում լայն տարածված և հեշտ նմուշառվող *Helix lucorum* տեսակի օրինակով:
5. Ուսումնասիրել փափկամարմինների տեսակային կազմը և ԴՆԹ-ի վնասվածության աստիճանը՝ էկոհամակարգերի վրա թունաքիմիկատների ազդեցության գնահատման համար՝ Հայաստանում լայն տարածում ունեցող և հեշտ նմուշառվող *Georginapaeus hohenackeri* տեսակի օրինակով:

Դրված խնդիրների լուծման համար կիրառվել են հետազոտությունների դաշտային և լաբորատոր համապատասխան մեթոդներ:

Աշխատանքի նորույթը և գիտագործնական նշանակությունը

Գրախոսվող աշխատանքը ծավալուն հետազոտություն է, որում տրվում է Հայաստանի ցամաքային փափկամարմինների բազմազանության ձևաբանական և գենետիկական ուսումնասիրությունների արդյունքները և դրանց կիրառումը զանազան աբիոտիկ և մարդածին գործոնների ազդեցության գնահատման մեջ: Գրանցվել է Հայաստանի փափկամարմինների ֆաունայի մեկ նոր ինվազիվ տեսակ և մի շարք լայն տարածված տեսակների համար ներտեսակային գենետիկական բազմազանություն: Կատարված ուսումնասիրության արդյունքները շատ կարևոր են և կնպաստեն Հայաստանում փափկամարմինների բազմազանության պահպանմանը, էկոլոգիական մի շարք խնդիրների հասցեգրմանը և լուծմանը, ինչպես նաև կխթանեն բնապահպանական ծրագրերի մշակումը: Աշխատանքում ներկայացված փափկամարմինների տեսակային կազմի և առանձնյակների քանակի կիրառմամբ զբոսաշրջության ազդեցության գնահատումը բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) մատչելի և կիրառական մեթոդ է, որը կարող է օգտագործվել նմանատիպ այլ աշխատանքներում:

Ատենախոսության մեջ արծածված արդյունքների մի մասը՝ մասնավորապես թունաքիմիկատների կիրառումը, կարող են իրենց ուրույն տեղն ունենալ նաև գյուղատնտեսության բնագավառում:

Բացի վերը նշվածից, աշխատանքում արտացոլված արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական աշխատանքների, ինչպես նաև ուսումնական գործընթացների ժամանակ:

Այսպիսով, Մ.Վ. Արզումանյանի ատենախոսությունում ներկայացված են Հայաստանի փափկամարմինների ֆաունայի և էկոլոգիայի ամբոջական տվյալներ և դրանց համեմատական վերլուծություն:

Դիտողություններ

Ներկայացված աշխատանքի վերաբերյալ չունենալով սկզբունքային առարկություններ, հարկ ենք համարում կատարել հետևյալ դիտողությունները.

1. Աշխատանքի 3.4 ենթագլխում արդյունքները ներկայացված են շատ սեղմ ձևով, օրինակ, նշվում է, որ ցամաքային փափկամարմինների գունավորման վրա ծանր մետաղները չեն ունեցել հավաստի ազդեցություն, և բերվում է միայն հավաստիություն գործակցի միավորը և կորելացիայի բացակայություն առկայությունը:
2. 3.5.2-ում ներկայացվում է թունաքիմիկատների ազդեցությունը ցամաքային փափկամարմինների ԴՆԹ-ի վնասվածության աստիճանի վրա, սակայն առկա չեն թունաքիմիկատների կիրառման դոզաչափական տվյալներ, որը հնարավորություն կտար համեմատական վերլուծություն իրականացնելու:
3. Ատենախոսության մեջ տեղ են գտել մի շարք ոճաբանական, լեզվաբանական և տեխնիկական բնույթի թերություններ և ոչ հայահունչ եզրույթներ: Առկա են կրկնվող եզրույթներ:

Առաջարկություն

Հայաստանի ցամաքային փափկամարմինների տեսակային կազմի վերաբերյալ հեղինակի կողմից ստացված արդյունքները կարելի է տպագրել որպես ուսումնա-մեթոդական ձեռնարկ, որը շատ օգտակար կլինի ինչպես գիտական աշխատանքների կատարման, այնպես էլ ուսումնական գործընթացում:

Եզրակացություն


Ս. Վ. Արզումանյանի «Հայաստանի ցամաքային փափկամարմինների բազմազանությունը և էկոլոգիան» ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի Կենդանաբանության 036 մասնագիտական խորհրդի մասնագիտությանը՝ Գ. 00.08՝ «Կենդանաբանություն. մակարածաբանություն. էկոլոգիա»:


Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունն արտացոլված են ատենախոսության սեղմագրում, ինչպես նաև հրատարակված 4 աշխատանքներում:

Եզրակացությունները տրամաբանորեն բխում են աշխատանքի նպատակից և համապատասխանում են հայցորդի առջև դրված խնդիրներին:

Կատարված ուսումնասիրությունների ծավալով, ստացված գիտական նորույթով, տեսական և գործնական նշանակությամբ գրախոսվող աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ հեղինակը՝ Մերի Վիկտորի Արզումանյանը, արժանի է կենսաբանական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանին:

Աշխատանքը քննարկվել է նոյեմբերի 28-ին տեղի ունեցած կենսաբանության և քիմիայի ամբիոնի թիվ 4 արտահերթ նիստում, որին ներկա էին ամբիոնի վարիչի ժպ կ.գ.դ., պրոֆեսոր Ս. Ս. Ալեքսանյանը, կ.գ.թ., դոցենտներ՝ Ա. Ֆ. Գրիգորյանը, Ն. Վ. Աղամյանը, Կ. Ռ. Պետրոսյանը, Ա. Ս. Խաչատրյանը, Ա. Ս. Ալեքսանյանը, Գ. Ռ. Օքսուզյանը, Կ. Խ. Ավագյանը, Լ. Հ. Մելքոնյանը, ասիստենտներ՝ Կ. Ա. Գրիգորյանը, Ա. Ա. Խաչատրյանը, ինչպես նաև լաբորանտներ՝ Թ. Ռ. Փանոսյանը և Ա. Ա. Բարսեղյանը:

Կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչի ժպ
Պրոֆեսոր, կ.գ.դ.  Ս. Ս. Ալեքսանյան

Կենսաբանության և քիմիայի ամբիոնի
դոցենտ, կ.գ.թ.  Ա. Ֆ. Գրիգորյան

Ս. Ս. Ալեքսանյանի և Ա. Ֆ. Գրիգորյանի ստորագրությունների իսկությունը
հաստատում են ՇՂՀ գիտքարտուղար
Կ.գ.թ., դոցենտ  Կ. Ռ. Պետրոսյան

